

# Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). արդյունքների վերաբերյալ Հայաստանի անցումային զեկույց 2018–2020

Զեկույցը պատրաստվել է անկախ հետազոտող Տաթևիկ Մարգարյանի հետ համագործակցության արդյունքում:

## Բովանդակություն

<b>I. Ներածություն</b>	<b>2</b>
<b>II. Գործողությունների ծրագրի իրականացում</b>	<b>3</b>
2.1. Ընդհանուր միտումներ և արդյունքներ	3
2.2. COVID-19 համավարակի ազդեցությունը իրականացման գործընթացում	4
2.3. Նախնական արդյունքներ	6
2.4. Հանձնառությունների իրականացում	15
<b>III. Շահագրգիռ կողմերի մասնակցություն</b>	<b>21</b>
3.1 Շահագրգիռ կողմերի ներգրավումը գործողությունների ծրագրի իրականացման ընթացքում	21
3.2 Գործողությունների ծրագրի իրականացման գործընթացում Հայաստանի կատարողականի ամփոփ նկարագիր	24
<b>IV. Մեթոդոլոգիան և տեղեկատվության աղբյուրները</b>	<b>27</b>
<b>Հավելված I. ԱՀՄ չափանիշները</b>	<b>29</b>

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության համար պատասխանատու է բացառապես Անկախ հաշվետվական մեխանիզմը (ԱՀՄ), և պարտադիր չէ, որ այն արտացոլի Եվրամիության տեսակետները: ԱՀՄ ուսումնասիրություններն իրականացվում են տվյալ երկրի անկախ հետազոտողների հետ համագործակցությամբ, վերանայվում են ԱՀՄ աշխատակազմի կողմից և վերահսկվում փորձագետների միջազգային խմբի (ՓՄԽ) կողմից՝ անկախ, օբյեկտիվ և փաստահեն հետազոտություն սպասելովելու նպատակով:



## I. Ներածություն

Բաց կառավարման գործընկերությունը (ԲԿԳ) միջազգային նախաձեռնություն է, որը միավորում է պետական բարեփոխումները ստանձնած պաշտոնյաների ու քաղաքացիական հասարակության առաջնորդների ջանքերը՝ կառավարությունն ավելի մասնակցային, պատասխանատու և հաշվետու դարձնելու նպատակով գործողությունների ծրագրերի մշակման շուրջ: Գործողությունների ծրագրի հանձնառությունները կարող են բխել ինչպես արդեն իսկ առկա գործընթացներից կամ սահմանել իրականացվող բարեփոխումներին նպաստող նոր միջոցառումներ, այնպես էլ գործողություններ նախատեսել բոլորովին նոր ոլորտներում: ԲԿԳ անկախ հաշվետվական մեխանիզմը (ԱՀՄ) ուսումնասիրում է գործողությունների բոլոր ծրագրերը՝ համոզվելու, որ կառավարությունները հետևում են ստանձնած հանձնառություններին: Քաղաքացիական հասարակությունն ու պետական ղեկավարներն օգտագործում են ուսումնասիրությունը՝ վերլուծելու իրենց աշխատանքը և որոշելու, թե կատարված գործողությունները փոփոխություն բերե՞լ են արդյոք մարդկանց կյանքում:

Այս ուսումնասիրությունն իրականացնելու համար ԱՀՄ-ն համագործակցել է անկախ հետազոտող Տաթևիկ Մարգարյանի հետ: ԱՀՄ նպատակն է աջակցել հետագա հանձնառությունների մշակման և իրականացման շուրջ երկխոսության ծավալմանը: ԱՀՄ մեթոդաբանությանն ավելի մանրամասն ծանոթանալու համար այցելե՛ք <https://www.opengovpartnership.org/about/independent-reporting-mechanism>:

Այս զեկույցն անդրադառնում է Հայաստանի չորրորդ՝ 2018-2020 թվականների գործողությունների ծրագրի իրագործմանը: Այն մշակվել է 2020 թվականի նոյեմբերին և հետագայում վերանայվել՝ ներառելով 2021 թվականի մարտի նախնական քննարկման և 2021 թվականի մայիսի հանրային քննարկման փուլերի ընթացքում ստացած տեղեկությունները: 2021 թվականին ԱՀՄ-ն նոր մոտեցում կկիրառի իր հետազոտական գործընթացում և կվերանայի գործողությունների ծրագրերի վերաբերյալ հաշվետվությունների բովանդակությունը՝ ելնելով «ԱՀՄ գործընթացի վերանայման»<sup>1</sup> արդյունքներից: 2018-2020 թթ. գործողությունների ծրագրերի իրականացման ԱՀՄ զեկույցները ձևափոխվել են՝ նպատակ ունենալով անցումային գործընթաց ապահովել ԱՀՄ նոր արդյունքների համար և ճկունություն հաղորդել ԱՀՄ աշխատանքների ընթացքին՝ հաշվի առնելով COVID-19 համավարակի ազդեցությունը երկրների ԲԿԳ գործընթացների վրա:

---

<sup>1</sup> Լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս՝ «ԱՀՄ գործընթացի վերանայում», Բաց կառավարման գործընկերություն, <https://www.opengovpartnership.org/process/accountability/about-the-irm/irm-refresh/>

## II. Գործողությունների ծրագրի իրականացում

Արդյունքների վերաբերյալ ԱՀՄ անցումային զեկույցում գնահատվում են գործողությունների ծրագրի հանձնառությունների կարգավիճակը և արդյունքները՝ գործողությունների ծրագրի ավարտի դրությամբ: Զեկույցում «չափելիություն», «համապատասխանություն» և «պոտենցիալ ազդեցություն» չափանիշների գնահատականները չեն վերանայվում: Այս չափանիշները գնահատվում են նախագծման վերաբերյալ ԱՀՄ զեկույցում: Չափանիշների մանրամասն նկարագիրը կարող էք գտնել այս զեկույցի Հավելված 1-ում:

### 2.1. Ընդհանուր միտումներ և արդյունքներ

Հայաստանի ԲԿԳ գործողությունների չորրորդ ծրագրի (2018-2020 թթ.) 11 հանձնառություններից յոթը զգալի չափով կամ ամբողջովին իրականացվել են: Սա որոշակի առաջընթաց էր գործողությունների նախորդ ծրագրի (2016-2018 թթ.) արդյունքների համեմատ, որի ութ հանձնառություններից չորսն էին զգալի չափով կամ ամբողջովին իրականացվել: Առաջընթացի հիմքերից մեկն այն է, որ ստանձնած հանձնառությունների մի մասն արդեն իսկ կառավարության օրակարգում էր: Օրինակ՝ իրական սեփականատերերի հրապարակմանը վերաբերող 3-րդ հանձնառությունը «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության» (ԱՃԹՆ) շրջանակում ստանձնած՝ հանքարդյունաբերական ընկերությունների իրական սեփականատերերի թափանցիկության վերաբերյալ պարտավորության շարունակությունն էր:

Ֆինանսական ռեսուրսների ապահովման կարողությունը հանձնառությունների իրականացման մեկ այլ որոշիչ գործոն էր, մինչդեռ ռեսուրսների պակասը սոցիալական ծառայություններին վերաբերող 7-րդ հանձնառության թերի կատարման հիմնական պատճառ դարձավ: 2020 թվականին COVID-19 համավարակը ևս խոչընդոտ եղավ իրականացման գործում՝ դանդաղեցնելով որոշումների կայացման գործընթացները և իրազեկման աշխատանքները, քանի որ փոխվեցին կառավարության գերակայությունները: Հարկ է նշել նաև, որ ի տարբերություն Հայաստանի ԲԿԳ գործողությունների նախորդ ծրագրերի՝ չորրորդ ծրագրում ստանձնած հանձնառություններից շատերը ներառում էին օրենսդրական փոփոխություններ: Օրենսդրական նախագծերը օրենքի ուժով պարտադիր տեղադրվում են առցանց՝ հանրային քննարկման նպատակով, ինչը բազմաշահառու խմբի (աշխատանքային խումբ) շրջանակից դուրս՝ լայն հանրության մասնակցության հնարավորություն էր ընձեռում:

Գործողությունների չորրորդ ծրագրի արդյունքում ձեռք բերված փոփոխությունները մեծ մասամբ առնչվում են տեղեկատվության մատչելիությանը: Հատկանշական է 3-րդ հանձնառությունը, որի շրջանակում կառավարությունը ներդրեց իրական սեփականատերերի ռեգիստրը՝ փորձարկելով այն հանքարդյունաբերական ընկերությունների համար: Կառավարությունը նախատեսում է հետագայում ընդլայնել իրական սեփականատերերի բացահայտման պարտադիր պահանջը՝ ընդգրկելով հայաստանյան ընկերությունների ավելի լայն շրջանակ, և տվյալները հրապարակել համակարգչային ծրագրերի համար ընթեռնելի ու բաց ձևաչափով: Ութերորդ հանձնառության արդյունքում ստեղծվեց մի հարթակ, որը տեղեկատվություն է տրամադրում հանրապետության բոլոր դպրոցների վերաբերյալ և հետադարձ կապի հնարավորություն տալիս ծնողներին: Հարթակը հնարավորություն է տալիս նաև դպրոցների ընդունելությունը կազմակերպել առցանց եղանակով, ինչը կարող է էապես նվազեցնել ընդունելության ոչ ֆորմալ և կոռուպցիոն մեխանիզմների կիրառումը:

Մյուս հանձնառությունների շնորհիվ բարելավվել են հանրային մասնակցության հնարավորությունները: Օրինակ՝ 10-րդ հանձնառության արդյունքում ստեղծվեց քաղաքացիների կողմից հանրագրերի ներկայացման առցանց հարթակ, իսկ 11-րդ հանձնառության շնորհիվ պետության կողմից տրամադրվող ծառայությունների վերաբերյալ քաղաքացիների հետադարձ կապի հարթակ ստեղծվեց և փորձարկվեց: Այս բոլոր հանձնառությունների ազդեցությունը հնարավոր կլինի տեսնել միայն ապագայում: Դրանց մեծ մասի լիարժեք իրականացումը և/կամ կիրառումն ապահովելու և ավելի շոշափելի արդյունքների հասնելու համար անհրաժեշտ կլինի հանրային իրազեկման լայնածավալ արշավներ և հետագա մոնիտորինգ իրականացնել:

Գործողությունների ծրագրի ավարտի պահին ջրային ռեսուրսների պետական կադաստրի (5-րդ հանձնառություն) և հողային կադաստրի (6-րդ հանձնառություն) հանձնառությունները միայն մասամբ են իրականացվել, և այդպիսով էական փոփոխությունների չեն հանգեցրել տեղեկատվության մատչելիության առումով: Շրջակա միջավայրի նախարարությունը ստեղծել է ջրային ռեսուրսների տվյալների շտեմարան և այն շուրջ 85 տոկոսով համալրել անհրաժեշտ տեղեկատվությամբ: Սակայն COVID-19-ով պայմանավորված տեխնիկական խնդիրներն ու ձգձգումները խոչընդոտել են տարբեր պետական գերատեսչությունների տվյալների շտեմարանների միջև լիարժեք փոխգործակցությանը: Բացի դրանից՝ զեկույցը գրելու պահին ջրային ռեսուրսների կադաստրը հանրությանը հասանելի դարձնելու գործընթացներ դեռևս չեն ընթանում: Ինչ վերաբերում է 6-րդ հանձնառությանը, ապա Կադաստրի կոմիտեն մուտքագրել է հողային կադաստրի տվյալների մեծ մասը, սակայն տվյալների մյուս բազաների հետ կապի հաստատման և այդ բազաներից տվյալների մուտքագրման գործընթացը դեռ չի ավարտվել:

## **2.2. COVID-19 համավարակի ազդեցությունը իրականացման գործընթացում**

2020 թվականին COVID-19 համավարակը որոշակի ազդեցություն է ունեցել գործողությունների ծրագրի իրականացման վրա, քանի որ հանձնառությունների որոշ բաղադրիչներ հետաձգվել են: Օրինակ՝ համավարակի պատճառով հետաձգվել են պետական բյուջեից դրամաշնորհների հատկացման կարգում փոփոխությունների հաստատումը, առողջապահական հարթակի վերաբերյալ հանրային իրազեկումը, ջրային ռեսուրսների տվյալների շտեմարանի լիարժեք լրացումը: Համավարակը խանգարեց նաև ԲԿԳ աշխատանքային խմբի հանդիպումների կազմակերպմանը 2020 թվականին, որը գործողությունների ծրագրի իրականացման փուլի երկրորդ տարին էր:

Էլեկտրոնային կառավարման հարթակները, ներառյալ ԲԿԳ գործողությունների ընթացիկ և նախորդ ծրագրերի շրջանակներում ստեղծվածները, համավարակի ընթացքում ավելի մեծ ուշադրություն են գրավել և կիրառում ստացել: Գործողությունների ընթացիկ ծրագրի շրջանակներում ստեղծված կրթական և առողջապահական հարթակները (համապատասխանաբար՝ 8-րդ և 9-րդ հանձնառություններ) հատկապես արդիական դարձան: Դրանք հնարավորություն են տալիս այդ ոլորտներում առցանց տեղեկատվություն ստանալ և գրանցվել ծառայություններ ստանալու համար՝ նվազագույնի հասցնելով դեմ առ դեմ հաղորդակցությունը:

Ընդհանուր առմամբ, բաց կառավարման արժեքների համատեքստում COVID-19-ը մի շարք մարտահրավերներ առաջ բերեց հանրային մասնակցության և տեղեկատվության մատչելիության առումով: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ստիպված էին իրենց մասնակցությունը սահմանափակել առցանց հարթակներով և հայտարարություններ տարածելով՝ միաժամանակ զրկված լինելով խորհրդակցական մարմինների, լսումների, բողոքի ակցիաների և մասնակցության այլ գործիքների օգտագործման հնարավորությունից: Կառավարության կողմից տեղեկատվության

պրոակտիվ հրապարակումը հատկապես համավարակի առաջին ամսվա ընթացքում ցածր մակարդակի վրա էր, իսկ տեղեկատվության հարցումների պատասխանները հաճախ ուշանում էին<sup>2</sup>: Ավելի ուշ Առողջապահության նախարարությունը հատուկ տեղեկատվական հարթակ գործարկեց՝ COVID-19-ի և դրա կանխարգելման միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար: Այս հարթակում հրապարակվել են նաև վարակվածների թվի վերաբերյալ նորությունները և վարակի տարածման ինտերակտիվ քարտեզը<sup>3</sup>:

Բացի դրանից՝ կառավարությունը հրապարակում էր համավարակի հետ կապված որոշումները, ներառյալ արտակարգ իրավիճակի կանոնները, ճանապարհորդության սահմանափակումները, տնտեսական և սոցիալական աջակցության ծրագրերը<sup>4</sup>:

Քաղաքացիներին արագ աջակցություն տրամադրելու և COVID-19-ի վերաբերյալ հարցերին պատասխանելու նպատակով օպերատիվ զանգերի կենտրոն ստեղծվեց<sup>5</sup>:

---

<sup>1</sup> Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). Հայաստանի ամփոփիչ զեկույց 2016-2018,

[https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2019/01/Armenia\\_End-Term\\_Report\\_2016-2018\\_ARM.pdf](https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2019/01/Armenia_End-Term_Report_2016-2018_ARM.pdf)

<sup>2</sup> Տեղեկատվության հասանելիությունը COVID 19-ի ժամանակ, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 15.05.2020, <http://www.foi.am/en/articles/item/1896/>

<sup>3</sup> Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19), ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն, <https://ncdc.am/coronavirus/>

<sup>4</sup> Պարետի որոշումներ, Հայաստանի Հանրապետության կառավարություն, <https://www.gov.am/en/commandant-decisions/>; COVID-19 ճամփորդական սահմանափակումներ, Հայաստանի Հանրապետության կառավարություն, <https://www.gov.am/am/covid-travel-restrictions/>; Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրեր, Հայաստանի Հանրապետության կառավարություն, <https://www.gov.am/am/covid19/>; Կորոնավիրուսի սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրեր, Հայաստանի Հանրապետության կառավարություն, <https://www.gov.am/am/covid-19-cragrer/>

<sup>5</sup> COVID-19, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, 16 մարտի 2020, <https://www.mfa.am/hy/COVID-19/2020/03/16/COVID/10144>

### 2.3. Նախնական արդյունքներ

ԱՀՄ-ն գիտակցում է, որ գործողությունների ծրագրի երկամյա ժամկետում ստացած արդյունքները կարող են տեսանելի չլինել, իսկ նախնական արդյունքների գնահատման համար անհրաժեշտ է հանձնառության կատարման առնվազն զգալի մակարդակ: Արդյունքների վերաբերյալ անցումային զեկույցի շրջանակներում ԱՀՄ-ն կօգտագործի «Արդյոք դա բերե՞լ է բաց կառավարմանը» (DIOG) ցուցանիշը՝ կառավարության գործելակերպում տեղ գտած փոփոխությունների հիման վրա ԲԿԳ համապատասխան ոլորտներում նախնական արդյունքները հասկանալու համար: Հետագայում՝ ԱՀՄ-ի արդյունքների նոր զեկույցներում, DIOG-ն այլևս չի օգտագործվի որպես գնահատման ցուցանիշ:

Բաժին 2.3-ը անդրադառնում է այն հանձնառությունների արդյունքներին, որոնք ծրագրի նախագծման վերաբերյալ ԱՀՄ զեկույցում առանձնացվել էին որպես հավակնոտ կամ լավ նախագծված, կամ էլ գուցե պակաս չափելի կամ հավակնոտ էին, բայց հաջողությամբ իրականացվել են և «զգալի» կամ «ակնառու» փոփոխություններ են բերել կառավարության գործելակերպում<sup>1</sup>: Այս բաժնում վերլուծության ենթարկված հանձնառությունները, ըստ Բաժին 2.4-ում ներկայացված ԱՀՄ գնահատականի, կատարման առնվազն «զգալի» մակարդակ ունեն<sup>2</sup>: Այսպիսով, այս բաժնում ներկայացված է վերոնշյալ չափանիշներին համապատասխանող հանձնառությունների վերաբերյալ ԱՀՄ վերլուծությունը, իսկ Բաժին 2.4-ում ամփոփված է գործողությունների ծրագրի բոլոր հանձնառությունների իրականացման աստիճանը:

Հանձնառություն 3՝ Իրական սեփականատերերի գրանցամատյան	
<p><b>Հանձնառության նպատակը</b></p>	<p>Այս հանձնառության նպատակն էր Հայաստանում գործող ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման մի ընդհանուր մեխանիզմ գործարկել՝ իրական սեփականատերերի համապարփակ ու անվճար հիմունքներով հասանելի ռեգիստրի ստեղծման միջոցով<sup>3</sup>: Կառավարությունը ռեգիստրը պետք է փորձարկեր հանքարդյունաբերության ոլորտում աշխատող ընկերությունների համար՝ մինչ այլ ընկերություններին գրանցամատյանում ներառելը: Ռեգիստրը կօգնի բացահայտել շահերի բախման այն դեպքերը, երբ ընկերությունը պատկանում է պաշտոնատար անձին, հայտնաբերել մենաշնորհային իրավիճակները, երբ տարբեր ընկերություններ ունեն միևնույն իրական սեփականատերը, ինչպես նաև օֆշորային սեփականությունը բացահայտելու միջոցով ապահովել հարկերի հավաքագրումը<sup>4</sup>: Այս հանձնառությունը սերտորեն կապված է «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության» (ԱՃԹՆ) 2016 թ. ստանդարտներով սահմանված՝ նավթի, գազի և հանքարդյունաբերական ընկերությունների իրական սեփականատերերի հրապարակման պահանջի հետ<sup>5</sup>:</p>
<p><b>Բերե՞լ է դա բաց կառավարման</b></p>	<p>2019 թվականի ապրիլին խորհրդարանն ընդունեց «Պետական գրանցման մասին» օրենքի փոփոխությունները, որոնցով սահմանվում է իրական սեփականատիրոջ հասկացությունը և գրանցամատյանում գրառման ենթակա տեղեկությունները<sup>6</sup>: Խորհրդարանն ընդունեց նաև «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի փոփոխությունները, ըստ որոնց</p>

**Զգալի**

հանքարդյունաբերական ընկերությունները պարտավոր են գրանցամատյանում հրապարակել իրական սեփականատերերի մասին տեղեկատվությունը<sup>7</sup>:

2020 թվականի մարտին կառավարությունը ընդունեց իրական սեփականատերերի վերաբերյալ հրապարակման ենթակա տվյալների ցանկի վերաբերյալ որոշումը<sup>8</sup>: 2020 թվականի ապրիլից հանքարդյունաբերական ընկերությունները e-register.am կայքում PDF ձևաչափով սկսեցին հրապարակել իրական սեփականատերերի մասին տեղեկությունները<sup>9</sup>: Ընթացքի մեջ է ծրագրային փաթեթի մշակումը՝ տեղեկատվությունը «բաց տվյալների» սկզբունքով ապահովելու համար, և 2021 թվականից սկսած Հայաստանը նախատեսում է իրական սեփականատերերի մասին տվյալները տրամադրել համակարգչային ծրագրերի համար ընթեռնելի ձևաչափով՝ «Իրական սեփականատերերի մասին տվյալների չափորոշիչին» համապատասխան<sup>10</sup>:

Այս հանձնառության իրականացման արդյունքում Հայաստանում համապատասխան իրավական կարգավորումներ են ընդունվել՝ իրական սեփականության հասկացությունն ամրագրելով իրավաբանական անձանց գրանցման մասին օրենքում: Սա կարևոր քայլ է Հայաստանի բոլոր ընկերությունների իրական սեփականատերերի թափանցիկությունն ապահովելու ուղղությամբ: Այնուամենայնիվ, քանի որ գործողությունների ծրագրի ավարտի դրությամբ գրանցամատյանում բաց տվյալների ձևաչափ ու որոնման հնարավորություններ ապահովող ծրագրային փաթեթը դեռ մշակման փուլում էր, հանձնառության կատարման մակարդակը գնահատվել է որպես «զգալի», այլ ոչ թե «ավարտված»:

Նախքան հանձնառությունը ստանձնելը, Հայաստանում ընկերությունների իրական սեփականատերերի մասին հանրությանը հասանելի և համապարփակ տեղեկատվություն չկար: Այս հանձնառության արդյունքում իրական սեփականատերերի, մասնավորապես՝ երկրի հանքարդյունաբերական ոլորտի ընկերությունների վերաբերյալ նոր տեղեկատվություն է հրապարակվել և հանրությանը հասանելի դարձել: Այնուամենայնիվ, իրական սեփականատերերի մասին տեղեկությունները ներկայումս տրամադրվում են PDF ձևաչափով, սկանավորված փաստաթղթերի տեսքով, իրթին բովանդակությամբ: Բարդ ձևաթուղթը և բաց տվյալների ձևաչափի բացակայությունը օգտվողների կողմից լրացուցիչ փորձագիտություն և ջանք են պահանջում՝ տվյալները հասկանալու և վերլուծելու համար<sup>11</sup>:

Ըստ որոշ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և հետաքննող լրագրողների՝ բացահայտման առկա գործընթացը կարող է լիարժեք տեղեկություն չտալ իրական սեփականատերերի մասին՝ հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի բացերի և թերի կիրարկման պատճառով<sup>12</sup>: Շահագրգիռ կողմերի նշած մեկ այլ մտահոգություն է այն, որ բաժնետերերը կարող են միտումնավոր տրոհել իրենց մասնաբաժինները, որպեսզի չանցնեն իրական սեփականության

	<p>իրավական սահմանման հիմքում ընկած 10%-ի ցուցանիշը և խուսափեն բացահայտման պահանջից<sup>13</sup>:</p> <p>Հաշվի առնելով, որ ներկայումս բաց տվյալների ձևաչափը ապահովված չէ, Հայաստանում իրական սեփականության մասին տեղեկատվության մատչելիության առումով հանձնառության արդյունքում տեղի ունեցած բարելավումը գնահատվել է «որոշակի»: Այնուամենայնիվ, ինչպես վերը նշվեց, 2021 թվականից սկսած Հայաստանը նախատեսում է իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալները տրամադրել համակարգչային ծրագրերի համար ընթեռնելի ձևաչափով:</p> <p>Հանձնառության իրականացման ընթացքում կառավարությունը օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ հանրային քննարկումներ է իրականացրել e-draft.am հարթակի միջոցով: ՔՀԿ-ների մասնակցությունն ապահովվել է հիմնականում ԱՃԹՆ բազմաշահառու խմբի միջոցով<sup>14</sup>: Բացի դրանից՝ շահագրգիռ կողմերի հետ քննարկումներ են իրականացվել կառավարության, ՔՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված մի շարք միջոցառումների ընթացքում<sup>15</sup>: Հայաստանի ԱՃԹՆ բազմաշահառու խումբը կազմված է կառավարության, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության գրեթե հավասար թվով ներկայացուցիչներից<sup>16</sup>, իսկ որոշումների մեծ մասը խմբում կայացվել է կոնսենսուսի միջոցով: Ըստ «Բաց սեփականություն» նախաձեռնության զեկույցի՝ հանքարդյունաբերության ոլորտում իրական սեփականատերերի բացահայտման ընթացակարգերը մշակելիս կառավարությունը ակտիվորեն ներգրավել է ՔՀԿ-ների, ԶԼՄ ներկայացուցիչների և մասնավոր հատվածի լայն շրջանակ<sup>17</sup>:</p> <p>Վերջնական փուլում որոշումներ կայացնելիս կառավարությունը հաշվի է առել քաղաքացիական հասարակության բազմաթիվ առաջարկներ: Օրինակ՝ իրական սեփականատերերի ռեգիստրում բաժնետերերի մասին տեղեկությունները հրապարակելու համար սահմանված շեմը ՔՀԿ-ների առաջարկով 20% բաժնեմասից իջեցվեց մինչև 10%-ի<sup>18</sup>: ՔՀԿ-ների կողմից վերջերս արված առաջարկներից<sup>19</sup> մի քանիսը ներառվել են «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի փոփոխությունների նախագծում: Դրանցից է, օրինակ, գործադիր ղեկավարներին ոչ միշտ որպես իրական սեփականատեր դիտարկելու առաջարկը և Կենտրոնական բանկի կողմից վստահելի բորսաների ցանկի սահմանման գաղափարը<sup>20</sup>: Բացի դրանից՝ տեխնիկական հարցերի վերաբերյալ առաջարկները հաշվի են առնվել իրական սեփականատերերի մասին հրապարակային տեղեկատվության՝ բաց տվյալների ձևաչափ ապահովող ծրագրային փաթեթի մշակման գործընթացում<sup>21</sup>: Հաշվի առնելով գրանցամատյանի իրականացման ընթացքում քաղաքացիական հասարակության ներգրավվածության բարձր մակարդակը՝ հանձնառության առաջընթացը քաղաքացիական մասնակցության առումով գնահատվել է «զգալի»:</p>
--	---



**Հանձնառություն 8՝ Կրթության կառավարման տեղեկատվական միասնական համակարգ**

**Հանձնառու-թյան նպատակը**

Այս հանձնառության նպատակն էր կրթության կառավարման միասնական հարթակի միջոցով ուսումնական հաստատությունների վերաբերյալ համապարփակ և բազմակողմանի տեղեկություններ տրամադրել և աջակցել դպրոցներում ընդունելության գործընթացին: Դպրոցներում լիցենզիայով սահմանված տեղերի քանակի մասին հրապարակային տեղեկությունները՝ առցանց ընդունելություն կազմակերպելու հնարավորության հետ, կարող են նվազեցնել ընդունելության ոչ ֆորմալ և կոռուպցիոն մեխանիզմների օգտագործման հնարավորությունը: Հանձնառությունը նախատեսում էր նաև հետադարձ կապի մեխանիզմ ստեղծել հարթակում՝ ըստ անհրաժեշտության լիազոր պետական մարմնի կողմից արձագանքի ակնկալիքով:

**Բերե՞լ է դա բաց կառավարման Որոշակի**

Կրթության կառավարման հարթակը, որը վարում է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը կից) հասանելի է <https://emis.am> կայքում: Այն մի շարք բաժիններ է ներառում, մասնավորապես Հայաստանի բոլոր ուսումնական հաստատությունների (նախադպրոցական հաստատություններ, դպրոցներ, ուսումնարաններ և քոլեջներ, բարձրագույն ուսումնական հաստատություններ) կառավարման տեղեկատվական համակարգերը և այդ հաստատությունների տվյալների բազաները: Հարթակում առկա են տվյալների գտման և որոնման հնարավորություններ, որոնք թույլ են տալիս ընտրված չափանիշների հիման վրա տեղեկություն գտնել և հաշվետվություններ ստեղծել:

Հարթակում առցանց գրանցման միջոցով կարելի է առաջին դասարան ընդունվել՝ առանց նախապես դպրոց այցելելու անհրաժեշտության: 2019 թվականին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը դպրոցի ընդունելության նոր համակարգը փորձարկեց Երևանում, իսկ 2020 թվականից սկսած համակարգը լիարժեք գործում է Հայաստանի գրեթե բոլոր դպրոցների համար: Էլեկտրոնային գրանցումը գործում է այն համայնքներում, որտեղ մեկից ավելի դպրոց կա: Մեկ դպրոց ունեցող համայնքներում բնակվող բոլոր երեխաներն այդ դպրոց ընդունվելու իրավունք ունեն, և հասանելի տեղերի բացակայության պատճառով մերժման ռիսկ չկա: 2020 թվականին Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը համակարգը փորձարկեց նաև քոլեջներում, ուսումնարաններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելություն կազմակերպելու համար<sup>22</sup>:

Ներկայումս տվյալների բազաներից լիարժեք գործում է միայն դպրոցների բազան՝ ներառելով բոլոր տիպի դպրոցները՝ պետական և մասնավոր, տարրական, միջին և ավագ: Մյուս ուսումնական հաստատությունների, այդ թվում՝ նախադպրոցական հաստատությունների, ուսումնարանների ու քոլեջների և բարձրագույն

	<p>ուսումնական հաստատությունների տվյալների մուտքագրումն ընթացքի մեջ է:</p> <p>Նախագծման վերաբերյալ ԱՀՄ գեկույցում նշվել էր բնակչության որոշ խմբերի համար ինտերնետի և համակարգչի հասանելիության խնդիրը որպես հանձնառության իրականացման հնարավոր ռիսկ: Սակայն Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի ներկայացուցիչը նշեց, որ այս առումով լուրջ խոչընդոտներ չեն արձանագրվել: Գրանցումը հնարավոր է նաև սմարթֆոնների միջոցով, որոնք հասանելի են Հայաստանի բնակչության մեծ մասին: Բացի դրանից՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը դպրոցներին հանձնարարել է աջակցել ծնողներին գրանցման գործընթացում, եթե վերջիններս դրա հետ կապված դժվարություններ ունենան: Ծնողների համար օգնություն ստանալու մեկ այլ տարբերակ է նախարարության թեժ գիծը:</p> <p>Մինչ այս հանձնառությունը դպրոցների ընդունելության գործընթացը հիմնականում իրականացվում էր դեմառդեմ հաղորդակցության միջոցով: Սա հաճախ ոչ պաշտոնական մեխանիզմների (օրինակ՝ միջնորդների) օգտագործման հնարավորություն էր ստեղծում ծնողների համար՝ մեծ պահանջարկ ունեցող դպրոցներում ընդունելությունը ապահովելու նպատակով, և թույլ էր տալիս կրկնակի գրանցվել մի քանի դպրոցում<sup>23</sup>: Գրանցման նոր էլեկտրոնային համակարգը նպաստել է կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը և բարելավել է ընդունելության վարչարարությունը՝ մինչ գործողությունների ծրագիրն առկա իրավիճակի համեմատ:</p> <p>Հանձնառության արդյունքում կառավարությունը նաև հանրության համար նոր տեղեկատվություն է հասանելի դարձրել՝ մի ձևաչափով, որը քաղաքացիներին հնարավորություն է տալիս ըստ սահմանված չափորոշիչների հեշտությամբ որոնել և գտնել դպրոցների վերաբերյալ ցանկացած տեղեկություն: Այս տեղեկությունները կարող են օգտագործվել ինչպես ծնողների, այնպես էլ կրթության ոլորտում աշխատող հետազոտողների ու կազմակերպությունների կողմից: Օգտվողները կարող են գտնել վիճակագրական տվյալներ, տեղեկություններ դպրոցական ենթակառուցվածքի, շենքային պայմանների, ուսուցիչների և դպրոցականների հարաբերակցության և այլ հարցերի վերաբերյալ: Այնուամենայնիվ, դպրոցներից գատ մյուս ուսումնական հաստատությունների տվյալները դեռևս հասանելի չեն:</p> <p>Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի ներկայացուցչի խոսքով՝ կայքի այցելությունների միջին քանակը ամսական հասնում է մոտ 40-45 հազարի: Բազմաթիվ ծնողներ առցանց հետադարձ կապի միջոցով հաղորդագրություն են ուղարկում, ընդ որում՝ մեծ մասամբ տեխնիկական խնդիրների վերաբերյալ՝ կապված գրանցման քայլերի, հաստատման խնդրանքի և այլնի հետ: Միննույն ժամանակ, որոշ նկատառումներ հաշվի են առնվել՝ հարթակի հնարավորությունները և գրանցման պահանջները բարելավելու նպատակով: Օրինակ՝ ավելացվել է գրանցման մասին SMS ծանուցում (էլեկտրոնային փոստով նամակի փոխարեն) ստանալու հնարավորությունը, որոնման արդյունքներում</p>
--	---

	<p>ցուցադրվում է նաև տվյալ դպրոցի առաջին դասարաններում առկա տեղերի քանակը<sup>24</sup>: Այսպիսով, այս հանձնառությունը որոշակի առաջընթաց է գրանցել ինչպես հանրային մասնակցության, այնպես էլ տեղեկատվության մատչելիության առումով:</p>
--	--

**Հանձնառություն 10՝ Հանրագրեր ներկայացնելու էլեկտրոնային հարթակ**

<p><b>Հանձնառու-թյան նպատակը</b></p>	<p>Այս հանձնառությունն ուղղված էր հանրագրեր ներկայացնելու համար միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծմանը: Ըստ ՀՀ Սահմանադրության՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու իրավունք: Ցանկացած հանրագիր պետք է ուսումնասիրվի և պատասխան ստանա, եթե դրա մերժման համար որևէ պատճառ չկա: Հանրագրերի էլեկտրոնային հարթակի նպատակն է դյուրինացնել հանրագրերի ներկայացման, անհրաժեշտության դեպքում՝ նաև աջակիցների հավաքագրման գործընթացը: Հանրագրերը կարող են օգտագործվել ոչ միայն առանձին խնդիրներ լուծելու, այլև օրենսդրական նախագծեր առաջարկելու կամ հանրաքվե նախաձեռնելու համար:</p>
--------------------------------------	---

<p><b>Բերել է դաբաց կառավարման Ձգալի</b></p>	<p>2018 թվականին Արդարադատության նախարարությունը իրականացրել է միջազգային փորձի ուսումնասիրություն և, հիմնվելով ուսումնասիրության արդյունքների ու «Հանրագրերի մասին» ՀՀ օրենքի դրույթների վրա, մշակել հանրագրերի էլեկտրոնային հարթակի տեխնիկական առաջադրանքը<sup>25</sup>: Փոխվարչապետի գրասենյակի ներկայացրած առաջարկությունների հիման վրա Արդարադատության նախարարությունը փոփոխություններ է մշակել «Հանրագրերի մասին» օրենքում՝ ներառելով «էլեկտրոնային հարթակ» հասկացությունը և դրան առնչվող դրույթներ: Օրենսդրական փոփոխությունների նախագիծը նախարարության կողմից հանրային քննարկման էր ներկայացվել 2020 թվականի հուլիսին<sup>26</sup>, իսկ 2021 թվականի մարտի 24-ին փոփոխություններն ընդունվեցին խորհրդարանում<sup>27</sup>: 2020 թվականի հունիս-օգոստոս ժամանակահատվածում «էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» (ԷԿԵՆԳ) ՓԲԸ-ն փոխվարչապետի աշխատակազմի հետ համատեղ փորձարկեց նոր հարթակը <a href="http://e-petition.am/">http://e-petition.am/</a> կայքում, իսկ 2020 թվականի սեպտեմբերից հարթակը լիարժեք գործում է:</p> <p>Հարթակը հնարավորություն է ընձեռում ներկայացնել հանրագրեր, հրապարակային հանրագրերի դեպքում հավաքել աջակիցների ստորագրություններ, ինչպես նաև պատասխան ստանալ համապատասխան պետական կառույցներից: Այս զեկույցը գրելիս հարթակում ներկայացված էին հինգ կոլեկտիվ և չորս անհատական հանրագրեր, որոնցից վեցն արդեն պատասխան էին ստացել: Պատասխան նամակներում հիմնականում տեղեկատվություն է ներկայացվել խնդրի ընթացիկ կարգավորումների վերաբերյալ (որոշ դեպքերում՝ մանրամասն բացատրությամբ) և նշվել, որ հանրագրում շարադրված խնդիրները հաշվի կառնվեն համապատասխան իրավական</p>
--	---

	<p>ակտերի և որոշումների հետագա քննարկման ժամանակ: Օրինակ՝ հրավառության և հրագործական արտադրանքի և նյութերի ազատ վաճառքի արգելքի առաջարկ ներկայացնող հանրագրի պատասխան նամակում կառավարությունը թվարկել է առնչվող օրենսդրական ակտերը և նշել, որ նախատեսում է աշխատանք տանել համապատասխան ոլորտի օրենսդրական դաշտի կարգավորման ուղղությամբ:</p> <p>Հանրագիրը և դրա պատասխանը կարող են հրապարակվել կամ չհրապարակվել հարթակում՝ կախված հանրագիր նախաձեռնող քաղաքացու նախընտրությունից: Հարթակում հրապարակված պատասխանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համապատասխան պետական մարմինների որոշում կայացնողները ուշադրության են առնում հանրագրերում բարձրաձայնված հարցերի մեծ մասը: Հարթակի օգտագործման ցածր մակարդակին նպաստող հիմնական գործոնը կարող է լինել նույնականացման քարտով գրանցվելու պահանջը և հանրագիր ներկայացնելու դեպքում էլեկտրոնային ստորագրության անհրաժեշտությունը: Հայաստանի բնակչության զգալի մասը չունի նույնականացման քարտ և էլեկտրոնային ստորագրություն<sup>28</sup>: Ներկայումս կառավարությունը քննարկում է այս նույնականացման մեխանիզմներն ավելի մատչելի գործիքներով փոխարինելու հնարավորությունը<sup>29</sup>: Հարթակի օգտագործումը խթանելու համար պակասում են նաև հանրային իրազեկման լայնածավալ գործողությունները, որոնք այս պահին հետաձգվել են:</p> <p>Հայաստանի քաղաքացիները և ՔՀԿ-ները հաճախ են օգտագործում հանրագրերի միջազգային հարթակները (օրինակ՝ <a href="http://change.org">change.org</a> կայքը)՝ իրենց նպատակները խթանելու համար: Ուստի քաղաքացիական հասարակությունն ու կառավարությունը ակնկալում են, որ հանրագրերի նոր էլեկտրոնային հարթակը կփոխարինի այդ հարթակներին՝ ներքին խնդիրները լուծելու հարցում: Այդ իսկ պատճառով, ինչպես նաև հաշվի առնելով համապատասխան պետական մարմիններից պարտադիր հետադարձ կապի պահանջը, քաղաքացիական հասարակության և կառավարության շահագրգիռ կողմերը գտնում են, որ այս հանձնառությունը կարևոր քայլ է ինչպես հանրային մասնակցության, այնպես էլ ուղղակի ժողովրդավարության կայացման ուղղությամբ<sup>30</sup>:</p> <p>Նախքան այս հանձնառությունը հանրագրեր ներկայացնել ցանկացող քաղաքացիները ստիպված էին պահանջվող քանակով ձեռագիր ստորագրություններ հավաքել և փաստաթղթերը թղթային ձևաչափով ներկայացնել կառավարությանը: Նոր էլեկտրոնային հարթակը զգալիորեն պարզեցրել է այս գործընթացը և ավելի իրագործելի դարձրել հանրագրերի աջակիցների համախմբումը՝ սոցիալական ցանցերի և այլ էլեկտրոնային միջոցներով տարածման լայն հնարավորությունների շնորհիվ: Հաշվի առնելով հարթակի կողմից քաղաքացիներին ընձեռված հնարավորությունները և դրա հետագա օգտագործման ներուժը՝ նույնականացման պահանջները վերանայելու դեպքում, այս</p>
--	---

հանձնառությունը զգալի առաջընթաց կրերի քաղաքացիական մասնակցության առումով:

<sup>1</sup> ԱՀՄ՝ ծրագրի նախագծման վերաբերյալ զեկույցներում հանձնառություններն առանձնացվում են որպես «ակնառու հանձնարարություն», եթե դրանք գնահատվել են որպես չափելի, ԲԿԳ արժեքներին համապատասխանող և «փոխակերպող» պոտենցիալ ազդեցություն ունեցող: Եթե պոտենցիալ ազդեցության այս շեմին համապատասխանող հանձնառություններ չեն եղել, ԱՀՄ-ն ակնառու հանձնառություններն ընտրել է «չափավոր» պոտենցիալ ազդեցությամբ հանձնառություններից: Հայաստանի ակնառու հանձնառությունների ցանկին ծանոթանալու համար տե՛ս 2018-2020 ծրագրի նախագծման ԱՀՄ զեկույցի սեղմագիրը [https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2019/10/Armenia\\_Design-Report\\_2018-2020\\_ARM.pdf](https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2019/10/Armenia_Design-Report_2018-2020_ARM.pdf):

<sup>2</sup> Հայաստանի ծրագրի նախագծման վերաբերյալ ԱՀՄ զեկույցում որպես ակնառու գնահատված հետևյալ հանձնառությունները չեն ներառվել այս բաժնում, քանի որ դրանց կատարման մակարդակը ցածր էր, ուստի առկա առաջընթացը բավարար չէր արդյունքների գնահատման համար. 5-րդ հանձնառությունը՝ «Ջրային ռեսուրսների պետական կադաստր», 6-րդ հանձնառությունը՝ «Հողային կադաստր»:

<sup>3</sup> ՀՀ կառավարություն, 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1307-Լ որոշման հավելված, «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի

Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), [https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia\\_Action-Plan\\_2018-2020\\_ARM.doc](https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_ARM.doc)

<sup>4</sup> Բաց կառավարման գործընկերություն, Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). ծրագրի նախագծման վերաբերյալ Հայաստանի զեկույց 2018–2020, [https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2019/10/Armenia\\_Design-Report\\_2018-2020\\_ARM.pdf](https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2019/10/Armenia_Design-Report_2018-2020_ARM.pdf)

<sup>5</sup> 2.5 Իրական սեփականություն, «ԱՃԹՆ ստանդարտ 2019», Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն, <https://eiti.org/document/eiti-standard-2019/#r2-5>

<sup>6</sup> ՀՀ օրենքը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին, 23.04.2019, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=130252>

<sup>7</sup> ՀՀ օրենքը ՀՀ «Ընդերքի մասին» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, 23.04.2019, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=130250>

<sup>8</sup> ՀՀ կառավարության 408-Ն որոշումը «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրում ներառված՝ հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանելու մասին», 26.03.2020, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140718>

<sup>9</sup> Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրերը, ԱՃԹՆ Հայաստան, <https://www.eiti.am/hy/ԻՄ-հայտարարագրեր/?tab=88>

<sup>10</sup> Լուսինե Թովմասյան (ԱՃԹՆ Հայաստան), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 14 նոյեմբերի 2020

<sup>11</sup> Քրիստինե Աղալարյան (Հետք), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 12 նոյեմբերի 2020

<sup>12</sup> Մետաղական հանքերի սեփականատերերը, հայկական պոնձի և մոլիբդենի առյուծի բաժնից շահույթ են ստանում ռուս գործարարները, Քրիստինե Աղալարյան, Հետք, 6 հունիսի 2020, <https://hetq.am/hy/article/117849>; Առաջարկություններ հանքարդյունաբերական ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման գործընթացում արձանագրված որոշ խնդիրների լուծման ուղղությամբ, ՀՀ ԱՃԹՆ բազմաշահառու խմբի քաղաքացիական հասարակության խմբակցություն, 16.06.2020, <https://transparency.am/hy/publications/view/345>

<sup>13</sup> Ըստ իրական սեփականության վերաբերյալ ԲԿԳ գլոբալ զեկույցի ([https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2019/05/Global-Report\\_Beneficial-Ownership.pdf](https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2019/05/Global-Report_Beneficial-Ownership.pdf), էջ 13), ԲԿԳ երկրների մեծ մասը որպես պարտադիր հաշվետվության շեմ է սահմանել 25% բաժնեմասը, հետևաբար, 10% բաժնեմասի շեմը բավականաչափ ցածր է՝ իրական սեփականատերերի բավականաչափ մեծ շրջանակ բացահայտելու համար: Այնուամենայնիվ, վերջին տարիներին բուռն քննարկումների և քաղաքացիական ակտիվության նախաձեռնությունների առարկա հանդիսացող Ամուլսարի հանքը շահագործող ընկերության դեպքում հանձնառությունը չօգնեց բացահայտել ընկերության բաժնետերերին, քանի որ նրանք բոլորը բաժնեմասերի 10%-ից պակաս ունեին:

<sup>14</sup> Արձանագրություններ և առնչվող այլ փաստաթղթեր, ԱՃԹՆ Հայաստան, <https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents/>

<sup>15</sup> Այս միջոցառումների վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար տե՛ս՝ «Քննարկվել են իրական սեփականատերերի բացահայտման ուղղությամբ նախատեսվող իրավակարգավորումները», 31.01.2019, <https://www.moj.am/article/2240>; «Ներկայացվել է իրական սեփականատերերի բացահայտման ուղղությամբ Հայաստանում առկա առաջընթացը», Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 29.10.2019, <https://transparency.am/hy/news/view/2904>: Տես նաև «Իրական սեփականատերերի թափանցիկությունը Հայաստանում» նախնական ուսումնասիրություն, «Բաց սեփականություն» նախաձեռնություն, օգոստոս 2020, էջ 7, <https://www.openownership.org/uploads/armenia-scoping-report.pdf>

- 
- <sup>16</sup> ԲՇԽ-ի-կազմ, ԱՃԹՆ Հայաստան, <https://www.eiti.am/hy/ԲՇԽ-ի-կազմ/>
- <sup>17</sup> «Իրական սեփականատերերի թափանցիկությունը Հայաստանում» նախնական ուսումնասիրություն, «Բաց սեփականություն» նախաձեռնություն, օգոստոս 2020, էջ 7, <https://www.openownership.org/uploads/armenia-scoping-report.pdf>
- <sup>18</sup> Լուսինե Թովմասյան (ԱՃԹՆ Հայաստան), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 14 նոյեմբերի 2020
- <sup>19</sup> Առաջարկություններ հանքարդյունաբերական ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման գործընթացում արձանագրված որոշ խնդիրների լուծման ուղղությամբ, ՀՀ ԱՃԹՆ բազմաշահառու խմբի քաղաքացիական հասարակության խմբակցություն, 16.06.2020, <https://transparency.am/hy/publications/view/345>
- <sup>20</sup> «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծեր, քննարկվել է 24.10.2020 - 15.11.2020, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/2818>
- <sup>21</sup> Լուսինե Թովմասյան (ԱՃԹՆ Հայաստան), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 14 նոյեմբերի 2020
- <sup>22</sup> Հայտագրման համակարգ, <https://dimord.emis.am/>
- <sup>23</sup> Բաց կառավարման գործընկերություն, Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). ծրագրի նախագծման վերաբերյալ Հայաստանի զեկույց 2018–2020, [https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2019/10/Armenia\\_Design-Report\\_2018-2020\\_ARM.pdf](https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2019/10/Armenia_Design-Report_2018-2020_ARM.pdf)
- <sup>24</sup> Արտակ Պողոսյան (Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 12 նոյեմբերի 2020
- <sup>25</sup> Էլեկտրոնային հաղորդակցություն Աննա Հարությունյանի հետ (Արդարադատության նախարարություն), 11 դեկտեմբեր 2020
- <sup>26</sup> «Հանրագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/2609>
- <sup>27</sup> ՀՀ օրենքը ««Հանրագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 24.03.2021, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=151235>
- <sup>28</sup> Ըստ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի տրամադրած տեղեկատվության, Հայաստանում մոտ 1,2 միլիոն քաղաքացի նույնականացման քարտ ունի, և նրանցից մոտ 160 հազարն են երբևէ Էլեկտրոնային ստորագրություն ակտիվացրել (Էլեկտրոնային հաղորդակցություն Արաքս Ավետյանի հետ, «ԷԿԵՆԳ» ՓԲԸ, 13 ապրիլի 2021): Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ Բաց կառավարման գործընկերություն, Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). ծրագրի նախագծման վերաբերյալ Հայաստանի զեկույց 2018–2020, [https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2019/10/Armenia\\_Design-Report\\_2018-2020\\_ARM.pdf](https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2019/10/Armenia_Design-Report_2018-2020_ARM.pdf)
- <sup>29</sup> Սուրեն Քրմոյան (ՀՀ վարչապետի աշխատակազմ), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 13 նոյեմբերի 2020
- <sup>30</sup> Բաց կառավարման գործընկերություն, Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). ծրագրի նախագծման վերաբերյալ Հայաստանի զեկույց 2018–2020, [https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2019/10/Armenia\\_Design-Report\\_2018-2020\\_ARM.pdf](https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2019/10/Armenia_Design-Report_2018-2020_ARM.pdf)

## 2.4. Հանձնառությունների իրականացում

Ստորև ներկայացված աղյուսակը ներառում է գործողությունների ծրագրի յուրաքանչյուր հանձնառության կատարման աստիճանի գնահատականը:

Հանձնառու- թյուն	Կատարման աստիճանը (տվյալներ չկան, չսկսված, որոշակի, զգալի, ավարտված)
<p><b>1. «Բաց տվյալներ» պաշտոնական հայտարարագրերում</b></p>	<p><b>Զգալի</b></p> <p>2020 թվականի հուլիսին կառավարությունը հաստատեց հայտարարատուների շրջանակը և հայտարարագրերի բովանդակությունը ընդլայնելու վերաբերյալ օրենսդրական փոփոխությունները: 2020 թվականի սեպտեմբերին այդ փոփոխություններն ընդունվեցին խորհրդարանի կողմից առաջին ընթերցմամբ<sup>1</sup>, իսկ 2021 թվականի հունվարի 19-ին Խորհրդարանը այդ փոփոխությունները ընդունեց ամբողջությամբ<sup>2</sup>: 2020 թվականի մարտի 12-ին կառավարությունն ընդունեց N 306-Ն որոշումը, ըստ որի ընդլայնվեց հրապարակվող տվյալների ցանկը՝ ներառելով նաև հայտարարագրման ենթակա գործարքի (օրինակ՝ գույքի ձեռքբերման կամ նվիրատվության) մյուս կողմի վերաբերյալ տեղեկությունները<sup>3</sup>:</p> <p>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը 2020 թվականին իր կայքում հրապարակել է հայտարարագրերը ժամանակին չներկայացրած պաշտոնատար անձանց ցանկը և այդ անձանց նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցների մասին տեղեկատվությունը<sup>4</sup>: Այս հանձնաժողովը 2019 թվականի վերջին փոխարինեց Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին: Հանձնաժողովը մշակել է հայտարարագրերի գրանցման նոր համակարգի տեխնիկական առաջադրանքը<sup>5</sup>: Նոր համակարգը, սակայն, դեռ չի մշակվել՝ կառավարության հաստատման ու ֆինանսավորման սպասումով<sup>6</sup>:</p>
<p><b>2. Պետական դրամաշնորհների թափանցիկություն</b></p>	<p><b>Որոշակի</b></p> <p>Ֆինանսների նախարարությունը մշակեց և 2019 թվականի վերջին ամիսներին հանրային քննարկման ներկայացրեց պետական դրամաշնորհների հատկացման կարգի վերաբերյալ կառավարության որոշման փոփոխությունները, որոնք 2020 թվականին ուղարկվեցին կառավարության հաստատման<sup>7</sup>: Ի վերջո, կառավարությունը փոփոխված կարգը հաստատեց 2021 թվականի հունվարի 27-ին՝ գործողությունների ծրագրի ժամկետի ավարտից (2020 թ. օգոստոս) հետո<sup>8</sup>: Փոփոխված կարգում ներառված չէ հայտերի ձևանմուշների և այլ կից փաստաթղթերի որևէ փաթեթ: Որոշման մեջ նշված է, որ հայտի վերաբերյալ ցուցումները կտրամադրվեն դրամաշնորհների մրցույթի հայտարարության մեջ, իսկ մրցույթի ընթացքում օգտագործվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը կմշակվեն և կհրապարակվեն Ֆինանսների նախարարության կողմից: ԱՀՄ հետազոտողի կողմից նախարարությունների կայքերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ոչ բոլորում են հրապարակվել</p>

	մրցույթների արդյունքները և դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունները <sup>9</sup> :
<b>3. Իրական սեփականատերերի գրանցամատյան</b>	<b>Ձգալի</b> Այս հանձնառության կատարման և նախնական արդյունքների մասին տե՛ս Բաժին 2.3-ը:
<b>4. Համայնքային կայքերի արդիականացում</b>	<b>Ձգալի</b> 2020 թվականի հունվարին խորհրդարանն օրենսդրական փաթեթ ընդունեց՝ համայնքային կայքերում հրապարակման ենթակա տեղեկատվության կազմը ընդլայնելու և 20000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքներում ՏԻՄ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը հրապարակելու վերաբերյալ: Ընդ որում, օրենսդրական փոփոխությունների համաձայն՝ 2022-ի հունվարի 1-ից բոլոր համայնքները պետք է պաշտոնական կայք ունենան (ներկայումս միայն 3000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքներն են պարտավոր կայք ունենալ) <sup>10</sup> : Փոփոխությունների արդյունքում համայնքները պարտավոր են տեղեկություններ տրամադրել համայնքային կառույցների (ներառյալ բյուջեի), մատուցվող ծառայությունների, հանրային միջոցներով իրականացվող շինարարության, համայնքային սեփականություն հանդիսացող գույքի և տրամադրված թույլտվությունների քանակի և տեսակի մասին: Ներկայումս համայնքային կայքերը վերանայվել են՝ այս փոփոխություններով պահանջվող տեղեկությունները ներառելու նպատակով: Կայքերի նոր բաժինները տեղեկություն են նախատեսում համայնքային կազմակերպությունների (կրթական, մշակութային և այլն), տրված թույլտվությունների, ՏԻՄ-երի իրավական ակտերի նախագծերի, համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայությունների մասին՝ ներառյալ դրանց համար սահմանված վճարի չափը, մատուցման պայմանները, ընթացակարգերը և այլն: Այնուամենայնիվ, ԱՀՄ հետազոտողի կողմից համայնքային կայքերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ոչ բոլոր համայնքներն են օրենքով սահմանված ամբողջական տեղեկատվություն հրապարակում: Մասնավորապես, համայնքներից շատերը տեղեկություն չէին հրապարակել թույլտվությունների քանակի, համայնքային կազմակերպությունների բյուջեի և համայնքում իրականացվող շինարարական աշխատանքների վերաբերյալ <sup>11</sup> : «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնը», որը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ղեկավարությամբ ապահովում է համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերի ծրագրավորումը և տեխնիկական աջակցությունը, տեղական ինքնակառավարման մարմիններին ուղեցույցներ է տրամադրել կայքերի նոր բաժինների վերաբերյալ <sup>12</sup> : Թեև



	<p>նախարարության կողմից հանրային իրազեկման արշավներ չեն իրականացվել, համայնքային կայքերում տեսաուղերձ է տեղադրվել, որում ներկայացվում են համայնքապետարանին առցանց դիմումներ, հարցումներ կամ բողոքներ ուղարկելու հնարավորությունները<sup>13</sup>: 2021 թվականի հունվար-փետրվարին Հանրային հեռուստատեսությամբ հեռարձակված «Կյանքը միավորված համայնքներում» տեսաշարը, որը նկարագրում է համայնքների խոշորացման արդյունքում առկա ձեռքբերումներն ու հնարավորությունները, անդրադառնում է նաև համայնքների կողմից ծառայությունների մատուցման էլեկտրոնային գործիքներին<sup>14</sup>:</p>
<p><b>5. Ջրային ռեսուրսների պետական կադաստր</b></p>	<p><b>Որոշակի</b></p> <p>Ըստ Շրջակա միջավայրի նախարարության՝ հանձնառության համար պատասխանատու ներկայացուցչի, գործողությունների ծրագրի ավարտին ջրային ռեսուրսների տվյալների շտեմարանը ներառում էր նախարարությունում առկա տեղեկատվության շուրջ <b>85%-ը</b>, ինչը զգալի առաջընթաց է՝ համեմատած <b>10%</b> էլակետային ցուցանիշի հետ: Այնուամենայնիվ, շտեմարանը հասանելի չի դարձել հանրությանը: Տվյալների բազան տեղեկություններ է ներառում ջրային ռեսուրսների ծավալի, որակի, հոսքերի, աղտոտվածության, ջրօգտագործման մասին՝ ըստ աղբյուրի (ներառելով մակերևութային և ստորերկրյա ջրերը): Սակայն <b>COVID-19-ի</b> հետ կապված տեխնիկական խնդիրներն ու ձգձգումները խոչընդոտել են տարբեր պետական գերատեսչությունների տվյալների շտեմարանների միջև լիարժեք փոխգործակցությանը: Տվյալների բազան հանրության համար հասանելի դարձնելու մոտակա պլաններ դեռևս չկան<sup>15</sup>:</p>
<p><b>6. Հողային կադաստր</b></p>	<p><b>Որոշակի</b></p> <p>Գործողությունների ծրագրի ավարտին Կադաստրի կոմիտեն մուտքագրել էր հողային կադաստրի տվյալների մեծ մասը: Այնուամենայնիվ, տվյալների մյուս շտեմարանների հետ կապը և տվյալների մուտքագրումը դեռ ընթացքի մեջ է: Որպես հաջորդ քայլ՝ Կադաստրի կոմիտեն նախատեսում է ապահովել տվյալների բազայի հասանելիությունը պետական հաստատությունների համար<sup>16</sup> <sup>17</sup>: Ըստ գործողությունների ծրագրի, հանձնառության ժամկետը շարունակվում է մինչև <b>2022 թվականը</b><sup>18</sup>, ուստի ակնկալվում է, որ կադաստրը հանրությանը հասանելի կդառնա առաջիկա տարիներին, երբ կմշակվեն և կընդունվեն անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները:</p>
<p><b>7. Ինտեգրված սոցիալական ծառայությունների մատչելիություն</b></p>	<p><b>Որոշակի</b></p> <p>Գործողությունների ծրագրի ավարտի դրությամբ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը կից Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտը քարտեզագրել է այն կազմակերպությունները, որոնք ներկայումս սոցիալական ծառայություններ են մատուցում: Սակայն <b>esocial.am</b> հարթակը ներկայումս չի գործում ֆինանսական խնդիրների պատճառով: ԲԿԳ աշխատանքային խմբի <b>2019 թվականի հուլիսի 24-ի</b> նիստին որոշվեց սոցիալական ծառայությունների գնահատման</p>

	բաղադրիչը ներառել գործողությունների ծրագրի 11-րդ հանձնառության ներքո գտնվող քաղաքացիների հետադարձ կապի հարթակում <sup>19</sup> :
<b>8. Կրթության կառավարման տեղեկատվական միասնական համակարգ</b>	<b>Ձգալի</b> Այս հանձնառության կատարման և նախնական արդյունքների մասին տե՛ս Բաժին 2.3-ը:
<b>9. Առողջապահական աջակցության ծրագիր</b>	<b>Ձգալի</b> Առողջապահության նախարարությունը բարելավել է ըստ բժշկական հաստատությունների և աջակցության ծրագրերի առկա ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվությունը և armed.am կայքում տրամադրել հաստատությունների կոնտակտային տվյալները և տեղակայման քարտեզը <sup>20</sup> : Հերթագրման նոր համակարգը հնարավորություն է տալիս օգտվողներին առցանց գրանցվել նախընտրած բժշկական հաստատության սպասացանկում՝ բժիշկների տրամադրած էլեկտրոնային ուղեգրի համարը մուտքագրելու միջոցով: 2020 թվականի ապրիլի 1-ից բժշկական ուղեգրերը տրամադրվում են էլեկտրոնային եղանակով, իսկ հերթագրումն իրականացվում է միայն էլեկտրոնային հարթակի միջոցով: Սկզբնական փուլում հերթագրումն իրականացրել են ուղեգիրը տրամադրող բժիշկները՝ պացիենտի նախընտրության հիման վրա: COVID-19- ի պատճառով ծրագրով պլանավորված հանրային իրազեկումը և հետադարձ կապի հավաքումը հետաձգվել են <sup>21</sup> :
<b>10. Հանրագրեր ներկայացնելու էլեկտրոնային հարթակ</b>	<b>Ավարտված</b> Այս հանձնառության կատարման և նախնական արդյունքների մասին տե՛ս Բաժին 2.3-ը:
<b>11. Հանրային ծառայությունների հետադարձ կապ</b>	<b>Ձգալի</b> «էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» (ԷԿԵՆԳ) ՓԲԸ-ն, փոխվարչապետի աշխատակազմի համակարգմամբ, հանրային ծառայությունների գնահատման նոր հարթակ ստեղծեց, որը փորձնական ձևաչափով գործում է 2020 թվականի օգոստոսից <sup>22</sup> : Գործողությունների ծրագրի ավարտին հարթակը պիլոտային ռեժիմում պետության կողմից տրամադրվող ընդամենը մի քանի ծառայություն էր ընդգրկում, բայց կառավարությունը նախատեսում է ընդլայնել ցանկը՝ ներառելով բոլոր հանրային ծառայությունները: Ծառայությունը ստանալուց հետո օգտվողները գրություն են ստանում, որում նշված են ծառայության համարանիշն ու հարթակի հասցեն և առաջարկվում է հետադարձ կապ տրամադրել հարթակում: Գնահատման հարցաշարը ներառում է ծառայության որակը, տևողությունը, արժեքը, անձնակազմի վերաբերմունքը և այլ ցուցանիշներ <sup>23</sup> : Հանրային իրազեկման գործողություններ դեռևս չեն իրականացվել:

<sup>1</sup> Նախագծի պատմություն, ՀՀ Ազգային ժողով, [http://parliament.am/draft\\_history.php?id=11922](http://parliament.am/draft_history.php?id=11922)

<sup>2</sup> ՀՀ օրենքը «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 19.01.2021, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=150019>

<sup>3</sup> ՀՀ կառավարության N 306-Ն որոշումը «Հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում ներառված հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանելու և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1835-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», 12.03.2020, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145444>

<sup>4</sup> Վարչական վարույթներ են հարուցվել, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, 13.03.2020, <http://cpcarmenia.am/hy/news/item/2020/03/13/1231231313/>

<sup>5</sup> Ըստ գործողությունների ծրագրի վերանայված տարբերակի, որը հաստատվել է 2019 թվականի օգոստոսին, այս հանձնառության ժամկետը, մասնավորապես հայտարարագրերի ռեգիստրի հետ կապված գործողությունը, երկարաձգվել է մինչև 2021 թվականի մայիս, տե՛ս՝ ՀՀ կառավարություն, 2019 թվականի օգոստոսի 29-ի N 1130-Լ որոշման հավելված, «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), [http://ogp.am/u\\_files/file/4th\\_edited\\_2019.pdf](http://ogp.am/u_files/file/4th_edited_2019.pdf)

<sup>6</sup> «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագրի առնչությամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կատարողականի հաշվետվություն (փաստաթուղթը տրամադրել է Լիլիա Աֆրիկյանը, ՀՀ վարչապետի աշխատակազմ, Էլեկտրոնային հաղորդակցության միջոցով, 20 հոկտեմբերի 2020)

<sup>7</sup> ՀՀ կառավարության որոշումը «ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 566-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», Նախագիծ, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/2199/>

<sup>8</sup> ՀՀ կառավարության N 97-Ն որոշումը «ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 566-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», 27.01.2021, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149496>

<sup>9</sup> Օրինակ՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը տեղեկատվություն է հրապարակել դրամաշնորհային մրցույթների և դրանց արդյունքների վերաբերյալ հաղթող ծրագրերի նկարագրով, սակայն դրամաշնորհային ծրագրերի արդյունքների մասին նախարարության համապատասխան կայքէջում տեղեկություններ չկան՝ <https://escs.am/am/category/grantsprograms>: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը իր կայքի «Հայտարարություններ» բաժնում հրապարակում է դրամաշնորհային մրցույթների վերաբերյալ տեղեկատվությունը և մրցույթում հաղթած կազմակերպությունների ցանկը <http://www.mlsa.am/?cat=142>: Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը իր կայքի «Դրամաշնորհային ծրագրեր» բաժնում տեղեկատվություն է տրամադրում միայն դրամաշնորհային մրցույթների վերաբերյալ [https://hti.am/main.php?lang=3&page\\_id=737&id=0&page\\_name=default](https://hti.am/main.php?lang=3&page_id=737&id=0&page_name=default): ԱՀՄ հետազոտողը դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ որևէ տեղեկություն չի գտել Էկոնոմիկայի նախարարության <https://www.mineconomy.am/> և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության <http://mtad.am/> կայքերում: Ըստ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ վերջերս հրապարակված հոդվածի, վերոնշյալ նախարարությունները առավել մեծ չափի գումարներ են հատկացրել ՔՀԿ-ներին 2018-2020 թթ. ընթացքում, տե՛ս՝ «2018-2020 թթ.-ին հասարակական կազմակերպությունները նախարարություններից ստացել են 11 միլիարդից ավել դրամաշնորհ ու սուբսիդիա», Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 08.09.2020, <http://www.foi.am/hy/articles/item/1914/>

<sup>10</sup> ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, 24.01.2020, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, հոդված 1.2 և հոդված 4.3, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=139078>

<sup>11</sup> ԱՀՄ հետազոտողը պատահական սկզբունքով ուսումնասիրել է 31 համայնքային կայքեր, որոնք ընտրվել են սիստեմատիկ ընտրանքային մեթոդով (3000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքների 155 կայքերի համախմբությունից): Ուսումնասիրված կայքերի մեծ մասի դեպքում կար համայնքային կազմակերպությունների ցանկ՝ կոնտակտային տվյալներով, բայց դրանց բյուջեի վերաբերյալ տեղեկատվություն չկար: Տրամադրված թույլտվությունների քանակը 31 կայքից միայն երկուսում է հրապարակվել: Գրեթե բոլոր կայքերը տեղեկություն էին տրամադրում համայնքային գույքի վերաբերյալ՝ ներառելով ընդհանուր տվյալներ՝ առանց ֆինանսական, վարձակալության կարգավիճակի մասին և այլ տեղեկությունների: Համայնքի ավագանու որոշումների նախագծերը, որպես կանոն, տեղադրված էին, սակայն որոշ դեպքերում բացակայում էին անհրաժեշտ հավելվածները: ԱՀՄ հետազոտողը տեղեկատվություն չի գտել կատարվող շինարարական աշխատանքների վերաբերյալ, քանի որ կայքերում համապատասխան ենթաբաժին չկար: Նմուշառված 31 կայքից երեքը ստուգման պահին չեն գործել: Համայնքների ցանկը՝ կայքերի հղումների հետ կարելի է գտնել «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնի» կայքում՝ <https://infosys.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=2&dt=Sites&tv=-2:>

- 
- <sup>12</sup> Աշոտ Գիլոյան (ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 10 դեկտեմբերի 2020, Գրիշա Խաչատրյան (Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 10 դեկտեմբերի 2020
- <sup>13</sup> «Ինչպես դիմել համայնքապետարան», YouTube, 03 ապրիլի 2020, [https://www.youtube.com/watch?v=rGrm-0dpiFE&feature=emb\\_logo](https://www.youtube.com/watch?v=rGrm-0dpiFE&feature=emb_logo)
- <sup>14</sup> Տե՛ս, օրինակ՝ «Կյանքը միավորված համայնքներում. Եղվարդ», Հայաստանի հանրային հեռուստաընկերություն, 21 հունվարի 2021 (սկսած 8:17 մինչև 9:33 ռոպեն), <https://youtu.be/KbjTQ3QIQV8?t=499>
- <sup>15</sup> Էդգար Փիրումյան (ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 05 նոյեմբեր 2020
- <sup>16</sup> Կարեն Գրիգորյան (ՀՀ կադաստրի կոմիտե), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 05 նոյեմբեր 2020
- <sup>17</sup> 2020 թվականի դեկտեմբերից սկսած ազգային գեոպորտալի քարտեզագրական համակարգի միջոցով իրականացվել է պետական կառավարման մարմինների համար բազային քարտեզագրական շերտերի հասանելիության ապահովման գործընթացը (տեղեկատվությունը ԱՀՄ-ին տրամադրվել է գեկույցի հանրային քննարկման փուլում, 19 մայիսի 2021):
- <sup>18</sup> Թեև գործողությունների ծրագրի անգլերեն թարգմանության մեջ որպես հանձնառության ավարտի ժամկետ նշված է 2020 թվականի դեկտեմբերը, պաշտոնապես ընդունված հայերեն տարբերակում նշված է 2022 թվականի դեկտեմբերը («Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), [https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia\\_Action-Plan\\_2018-2020\\_ARM.doc](https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_ARM.doc)):
- <sup>19</sup> Տեղեկանք ԲԿԳ-Հայաստան 2018-2020թթ. գործողությունների ծրագրում ամրագրված հանձնառությունների իրականացման ընթացքի վերաբերյալ, հանձնառություն 7 (փաստաթուղթը տրամադրել է Լիլիա Աֆրիկյանը, ՀՀ վարչապետի աշխատակազմ, Էլեկտրոնային հաղորդակցության միջոցով, 20 հոկտեմբեր 2020)
- <sup>20</sup> Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններում փաստացի կատարված աշխատանքները, առկա տեղերը և հերթագրումները, Արմեդ, <https://www.armed.am/publicdata/?pg=govlimits>
- <sup>21</sup> Ծաղկանուշ Սարգսյան (Առողջապահության նախարարություն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 09 նոյեմբերի 2020
- <sup>22</sup> Քաղաքացիների հետադարձ կապի մշտադիտարկման համակարգ, <https://gnahatir.am/>
- <sup>23</sup> Արաքս Ավետյան (ԷԿԵՆԳ ՓԲԸ), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 09 նոյեմբերի 2020

### III. Շահագրգիռ կողմերի մասնակցություն

#### 3.1 Շահագրգիռ կողմերի ներգրավումը գործողությունների ծրագրի իրականացման ընթացքում

2017 թվականին ընդունվեցին ԲԿԳ մասնակցության և համատեղ մշակման չափորոշիչներ, որոնք ուղղված են աջակցելու ԲԿԳ գործընթացի բոլոր փուլերում քաղաքացիական հասարակության մասնակցությանը և համատեղ աշխատանքին: Ակնկալվում է, որ ԲԿԳ մասնակից բոլոր երկրները պետք է համապատասխանեն այդ չափորոշիչներին: Չափորոշիչները նպատակ ունեն բարելավելու մասնակցության մակարդակը և որակը ԲԿԳ գործողությունների ծրագրերի մշակման, իրականացման և վերանայման ժամանակ:

ԲԿԳ կառավարման դրույթները սահմանում են նաև մասնակցության և համատեղ մշակման պահանջները, որոնք պետք է պահպանվեն տվյալ երկրի կամ աշխարհագրական միավորի կողմից գործողությունների ծրագրի մշակման և իրականացման ընթացքում՝ ԲԿԳ գործընթացին համապատասխանելու համար: Հայաստանի գործելակերպը չի հակասել ԲԿԳ գործընթացին՝ Հայաստանը դեռևս չի հրապարակել առցանց շտեմարանը, քանի որ ներկայումս ԲԿԳ նոր կայք է մշակվում:

Գործողությունների ծրագրի մշակման գործընթացում համատեղ մշակման և մասնակցության չափանիշներին հետևելու տեսանկյունից Հայաստանի կատարողականի ամփոփ նկարագիրը տե՛ս Բաժին 3.2-ում:

#### Աղյուսակ 3.1: Հանրային ազդեցության մակարդակը

ԱՀՄ-ն օգտագործում է «Հանրային մասնակցության միջազգային ասոցիացիայի» (IAP2) հանրային մասնակցության գնահատման սանդղակը<sup>2</sup>: ԲԿԳ-ի սկզբունքներին հավատարիմ լինելով՝ երկրները պետք է ձգտեն հասնել «համագործակցություն» մակարդակի:

Հանրային ազդեցության մակարդակը		Ծրագրի մշակման ընթացքում	Ծրագրի իրականացման ընթացքում
Լիազորում	Կառավարությունը որոշումներն ընդունելու լիազորությունը փոխանցել էր հանրության ներկայացուցիչներին		
Համագործակցություն	Առկա էր շարունակական երկխոսություն, ԵՎ հանրությունը մասնակցել է օրակարգի սահմանմանը	✓	
Ներգրավում	Կառավարությունն արձագանքում էր հանրության առաջարկներին		✓
Խորհրդակցում	Հանրությունը կարող էր մասնակցություն ունենալ		

Տեղեկացում	Կառավարությունը տեղեկացրել է հանրությանը գործողությունների ծրագրի մասին		
Առկա չէ	Քննարկում չի եղել		

Գործողությունների ծրագրի իրականացման փուլում քաղաքացիական հասարակության հետ խորհրդակցություններն ավելի հազվադեպ էին տեղի ունենում՝ մշակման փուլի համեմատ: 2019 թվականին ԲԿԳ աշխատանքային խմբի և շահագրգիռ կողմերի երեք հանդիպում է կազմակերպվել՝ ապրիլի 1-ին<sup>3</sup>, հուլիսի 24-ին<sup>4</sup> և հոկտեմբերի 30-ին<sup>5</sup>: Այս հանդիպումների ընթացքում առանձին հանձնառությունների համար պատասխանատու ներկայացուցիչները տեղեկատվություն են տրամադրել իրականացման ընթացքի վերաբերյալ և պատասխանել Աշխատանքային խմբի անդամների և շահագրգիռ կողմերի հարցերին: COVID-19 համավարակի պատճառով 2020 թվականին հանդիպումներ չեն եղել:

Հանձնառությունների կատարման ընթացքը ներկայացնելու և հանրության ու քաղաքացիական հասարակության կողմից առաջարկներ հավաքագրելու համար առանձին հանձնառությունների շուրջ մի շարք բաց միջոցառումներ են իրականացվել: Այս միջոցառումների թվում էին Արմավիրի զարգացման կենտրոնի կազմակերպած թեմատիկ հանդիպումները, փոքր լսարանով միջոցառումները և «թաունհոլ» ձևաչափով քննարկումները<sup>6</sup>, «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության» (ԱՃԹՆ) բազմաշահառու խմբի, «Բաց սեփականություն» նախաձեռնության և այս ոլորտում աշխատող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) կազմակերպած՝ իրական սեփականատերերի վերաբերյալ հանդիպումները<sup>7</sup>: ՔՀԿ-ների մի խումբ նախաձեռնել էր «Բաց կառավարման տվյալների հաքաթոն»՝ նորարարական գաղափարներ և բարձր տեխնոլոգիական լուծումներ ստանալու համար, որոնք կաջակցեն առողջապահության, ջրային և հողային ռեսուրսների կառավարման վերաբերյալ ԲԿԳ հանձնառություններին<sup>8</sup>: Վարչապետի աշխատակազմի ԲԿԳ քարտուղարը աջակցել է այս միջոցառումների կազմակերպմանը՝ ապահովելով շահագրգիռ կողմերի մասնակցությունն ու մասնակիցներին ներկայացնելով ԲԿԳ գործընթացը:

2020 թվականին մի շարք առցանց քննարկումներ են կազմակերպվել «Տեղային ԲԿԳ» ծրագրի շուրջ՝ Գյումրի և Վանաձոր քաղաքների տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության շահագրգիռ ներկայացուցիչների մասնակցությամբ<sup>9</sup>: Այս քննարկումների ընթացքում կառավարության ԲԿԳ քարտուղարը ներկայացրել է ԲԿԳ գործընթացը և ՏԻՄ ոլորտում մինչ օրս իրականացված հանձնառությունները: Մասնակիցները քննարկել են «Տեղային ԲԿԳ» նախաձեռնությանը միանալու հնարավորությունները և այն խնդիրները, որոնց կարելի է անդրադառնալ ծրագրում: Այնուհետև ԲԿԳ համակարգողի և գործընթացում ներգրավված ՏԻՄ և ՔՀԿ ներկայացուցիչների կողմից դիմում է պատրաստվել և ներկայացվել «Տեղային ԲԿԳ» նախաձեռնությանը անդամակցելու համար: Արդյունքում Գյումրիին և Վանաձորը ընտրվել են որպես ծրագրի մասնակից:

<sup>1</sup> ԲԿԳ գործընթացին հակասող գործելակերպ՝ (1) գործողությունների ծրագրի մշակման փուլում երկիրը չի համապատասխանում առնվազն «ներգրավում», կամ իրականացման փուլում՝ «տեղեկացում» մակարդակին, (2) կառավարությունը չի հավաքում, փաստաթղթավորում և ԲԿԳ կայքում կամ կայքէջում հրապարակում շտեմարանը՝ ԱՀՄ ուղեցույցին համապատասխան:

<sup>2</sup> « IAP2 հանրային մասնակցության գնահատման սանդղակ», IAP2, 2014, [http://c.ymcdn.com/sites/www.iap2.org/resource/resmgr/foundations\\_course/IAP2\\_P2\\_Spectrum\\_FINAL.pdf](http://c.ymcdn.com/sites/www.iap2.org/resource/resmgr/foundations_course/IAP2_P2_Spectrum_FINAL.pdf)

<sup>3</sup> «ԲԿԳ շահագրգիռ անդամների հանդիպում», Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, 01.04.2019, <http://ogp.am/hy/news/item/2019/04/01/NGOs/>,

- 
- <sup>4</sup> «Կայացել է Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնության աշխատանքային խմբի հանդիպումը», Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, 25.07.2019, [http://ogp.am/hy/news/item/2019/07/25/OGP\\_WG\\_July/](http://ogp.am/hy/news/item/2019/07/25/OGP_WG_July/)
- <sup>5</sup> «ՀՀ կառավարությունը կարևորում է քաղիասարակության հետ արդյունավետ համագործակցությունը. Էդուարդ Աղաջանյան», Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, 30.10.2019, [http://ogp.am/hy/news/item/2019/10/30/WG\\_meeting/](http://ogp.am/hy/news/item/2019/10/30/WG_meeting/)
- <sup>6</sup> ԲԿԳ/Հայաստան, Ֆեյսբուք, 18.10.2019, <https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/1984094005026730>; Արմավիրի զարգացման կենտրոն, Ֆեյսբուք, 22.10.2019, <https://www.facebook.com/armavirdc/posts/10162327211180704>; Արմավիրի զարգացման կենտրոն, Ֆեյսբուք, 18.10.2019, <https://www.facebook.com/armavirdc/posts/10162308754635704>; Արմավիրի զարգացման կենտրոն, Ֆեյսբուք, 22.10.2019, <https://www.facebook.com/armavirdc/posts/10162327156185704>; «Հանրային լսում «Աջակցություն բաց կառավարման գործընկերությանը» ծրագրին ուղղված առաջարկների շուրջ», Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, 28.02.2019, [http://ogp.am/en/news/item/2019/02/28/Town\\_Hall\\_Vanadzor/](http://ogp.am/en/news/item/2019/02/28/Town_Hall_Vanadzor/); «PKN 36: կառավարության ետնաբեմ», ՊեչաԿուչա Երևան, Ֆեյսբուք, <https://www.facebook.com/events/2436480539806061/>
- <sup>7</sup> Արձանագրություններ և առնչվող այլ փաստաթղթեր, ԱՃԹՆ Հայաստան, <https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents/>, «Քննարկվել են իրական սեփականատերերի բացահայտման ուղղությամբ նախատեսվող իրավակարգավորումները», 31.01.2019, <https://www.moj.am/article/2240>; «Ներկայացվել է իրական սեփականատերերի բացահայտման ուղղությամբ Հայաստանում առկա առաջընթացը», Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 29.10.2019, <https://transparency.am/hy/news/view/2904>, «Երկխոսություն հանքարդյունաբերության ոլորտի բոլոր շահագրգիռ կողմերի միջև՝ բարձրացնելու ոլորտի թափանցիկությունը և հաշվետվողականությունը», ԷկոԼուր, <https://www.ecolur.org/hy/news/mining/--/11724/>
- <sup>8</sup> «Մեկնարկում է «Բաց կառավարման տվյալների հեքթոն» մրցույթը», Հանրային լրագրության ակումբ, 16 ապրիլի 2019, <https://pic.am/meknarkumebakaravarmantvyalnerihackathon/>, Անի Հարությունյան, «Կոլեկտիվ իմաստության հետքերով. Լայնածավալ և խելացի քրաուդսոփինգը Հայաստանում», Բաց կառավարման գործընկերություն, 28 հունվարի 2020, <https://www.opengovpartnership.org/stories/chasing-after-collective-intelligence-crowdsourcing-widely-and-wisely-armenia/>
- <sup>9</sup> ԲԿԳ/Հայաստան, Ֆեյսբուք, 15.07.2020, <https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/2543128795789912>

### 3.2 Գործողությունների ծրագրի իրականացման գործընթացում Հայաստանի կատարողականի ամփոփ նկարագիր

Բանալի՝

Կանաչ= համապատասխանում է չափորոշիչներին

Դեղին= ընթացքում է (քայլեր են ձեռնարկվել չափորոշիչներին համապատասխանելու ուղղությամբ, սակայն դեռևս չի համապատասխանում չափորոշիչներին)

Կարմիր= կատարված քայլերի մասին որևէ հիմնավոր ապացույց չկա

Բազմաշահառու խումբ	Մշակման ընթացքում	Իրականացման ընթացքում
<b>1ա. Ֆորումի առկայություն.</b> Վարչապետի որոշմամբ ձևավորված ԲԿԳ աշխատանքային խումբը հետևում է գործողությունների ծրագրի իրականացմանը <sup>1</sup> :	Կանաչ	Կանաչ
1բ. Կանոնավոր հանդիպումներ. ԲԿԳ աշխատանքային խումբը իրականացման ժամանակահատվածում հանդիպել է երեք անգամ: Ըստ ԲԿԳ չափորոշիչի՝ հանդիպումները պետք է տեղի ունենան առնվազն եռամսյակը մեկ անգամ:	Դեղին	Դեղին
1գ. Մանդատի համագործակցային մշակում. Այս չափորոշիչը գնահատվել է ԱՀՄ նախագծման զեկույցում:	Դեղին	Կիրառելի չէ
1դ. Հրապարակային մանդատ. Գործողությունների ծրագրի մշակման փուլում աշխատանքային խմբի անդամների ընտրության և գործունեության ընթացակարգերի վերաբերյալ գրավոր մանդատ չի եղել: Իրականացման փուլում աշխատանքային խմբի անդամների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է ԲԿԳ կայքում 2019 թվականի հուլիսից, երբ ընդունվեց վարչապետի համապատասխան որոշումը աշխատանքային խմբի կազմի վերաբերյալ <sup>2</sup> :	Կարմիր	Դեղին
<b>2ա. Բազմաշահառու խմբի կազմ.</b> Աշխատանքային խումբը ներառում է ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական կազմակերպությունների ներկայացուցիչներ:	Կանաչ	Կանաչ
2բ. Հավասարություն. Աշխատանքային խմբում ընդգրկված է պետական կառույցների 15 և ոչ պետական կառույցների 7 ներկայացուցիչ:	Դեղին	Դեղին
<b>2գ. Թափանցիկ ընտրություն.</b> Ոչ պետական կազմակերպությունները ավտոմատ կերպով ներառվել են ԲԿԳ աշխատանքային խմբում, եթե նրանց մասնակցությունը նախատեսված է գործողությունների ծրագրի որևէ հանձնառությունում:	Կարմիր	Դեղին



<p>2դ. Կառավարության բարձր մակարդակի ներկայացուցչություն. Աշխատանքային խմբի համակարգողը վարչապետի աշխատակազմի ղեկավարն է: Աշխատանքային խմբում ներգրավված՝ կառավարության մյուս ներկայացուցիչները հիմնականում միջին օղակից են:</p>	Դեղին	Դեղին
<p><b>3ա. Բաց ձևաչափ.</b> Աշխատանքային խումբը բաց է քաղաքացիական հասարակության և խմբից դուրս գտնվող այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների՝ գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ առաջարկների ու մասնակցության համար<sup>3</sup>:</p>	Կանաչ	Կանաչ
<p>3բ. Հեռավար մասնակցություն. Աշխատանքային խմբի հանդիպումների ընթացքում հեռավար մասնակցության հնարավորություններ չեն եղել, սակայն նման հնարավորություն եղել է 2020 թվականին կազմակերպված միջոցառումների ընթացքում:</p>	Դեղին	Դեղին
<p>3գ. Արձանագրություններ. Աշխատանքային խմբի հանդիպումների և ԲԿԳ հիմնական միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը առկա է ԲԿԳ Հայաստանի կայքում<sup>4</sup>: Այնուամենայնիվ, կայքում համապարփակ տեղեկատվություն չկա ԲԿԳ հանձնառությունների իրականացման հետ կապված համապատասխան որոշումների, գործողությունների և արդյունքների վերաբերյալ:</p>	Կանաչ	Դեղին

Բանալի՝

Կանաչ= համապատասխանում է չափորոշիչներին

Դեղին= ընթացքում է (քայլեր են ձեռնարկվել չափորոշիչներին համապատասխանելու ուղղությամբ, սակայն դեռևս չի համապատասխանում չափորոշիչներին)

Կարմիր= կատարված քայլերի մասին որևէ հիմնավոր ապացույց չկա

Գործողությունների ծրագրի իրականացում	
<p>4ա. Գործընթացի թափանցիկություն. 2019 թվականին ԲԿԳ ազգային կայքում պարբերաբար նորություններ էին տեղադրվում ԲԿԳ գործընթացների վերաբերյալ, սակայն հանձնառությունների իրականացման, այդ թվում ուշացումների պատճառների և հետագա քայլերի վերաբերյալ տեղեկությունները քիչ էին: ԲԿԳ Հայաստան ֆեյսբուքյան էջն ավելի ակտիվ է եղել ԲԿԳ գործընթացների և արդյունքների վերաբերյալ տվյալներ և նորություններ հրապարակելու հարցում<sup>5</sup>:</p>	Դեղին
<p>4բ. Հաղորդակցության միջոցներ. ԲԿԳ ազգային կայքը հնարավորություն է տալիս հանրությանը մեկնաբանություններ թողնել նորությունների տակ: Գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ մեկնաբանություններ տեղադրելու տարբերակներ կայքում չկան, բայց քաղաքացիները կարող են մեկնաբանություններ ուղարկել ֆեյսբուքյան էջի միջոցով:</p>	Դեղին

<p>4գ. Քաղաքացիական հասարակության մասնակցություն. Ժամանակ առ ժամանակ հանդիպումներ են եղել կառավարության և քաղաքացիական հասարակության և այլ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ՝ առանձին հանձնառությունների և դրանց իրականացման վերաբերյալ:</p>	<p>Դեղին</p>
<p>4դ. Համագործակցություն ԱՀՄ հետ. Կառավարությունը տարածել է ծրագրի նախագծման վերաբերյալ ԱՀՄ զեկույցի հղումը պետական կառույցների և շահագրգիռ կողմերի շրջանում՝ տեղադրելով այն ԲԿԳ կայքի նորությունների բաժնում<sup>6</sup> և էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկելով աշխատանքային խմբի անդամներին:</p>	<p>Կանաչ</p>
<p>4ե. Բազմաշահառու խմբի մասնակցություն. Բազմաշահառու խումբը (ԲԿԳ աշխատանքային խումբ) հետևում է գործողությունների ծրագրի իրականացմանը և քննարկում է դրա բարելավման ուղիները:</p>	<p>Կանաչ</p>
<p>4զ. Բազմաշահառու խմբի մասնակցությունը ինքնագնահատման զեկույցի մշակման գործում. Կառավարությունը դեռ չի ներկայացրել ամփոփիչ ինքնագնահատման զեկույցը:</p>	<p>Կիրառելի չէ</p>
<p><b>4է. Շտեմարան.</b> Կառավարությունը ԲԿԳ կայքում դեռ չի հրապարակել ԱՀՄ ուղեցույցով պահանջվող տվյալների շտեմարանը<sup>7</sup>: Տեխնիկական առաջադրանք է մշակվել կառավարությանը պատկանող նոր ԲԿԳ կայքի համար, և կայքի մշակումն այժմ ընթացքի մեջ է: Ներկայիս ԲԿԳ Հայաստան կայքը<sup>8</sup> վարում է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն: Այն ընդհանուր տեղեկատվություն է տրամադրում ԲԿԳ նախաձեռնության, գործողությունների ծրագրերի, նորությունների մասին: Այնուամենայնիվ, կայքում չկան հանձնառությունների կատարման վերաբերյալ նյութեր և փաստաթղթեր, որոնք պահանջվում են ըստ ԱՀՄ ուղեցույցի:</p>	<p>Դեղին</p>

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության վարչապետ, Ռոբոշում N983-Ա «Համակարգող նշանակելու և աշխատանքային խումբ ստեղծելու մասին», 19 հուլիսի 2019, Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային կառավարում, <https://www.e-gov.am/decrees/item/20661/>

<sup>2</sup> «ԲԿԳ հայաստանյան չորրորդ գործողությունների ծրագրի աշխատանքները համակարգող աշխատանքային խումբ», Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, <http://ogp.am/hy/working-group/>

<sup>3</sup> «ԲԿԳ 4-րդ ծրագրի փոփոխությունների առաջարկների հրավեր», Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, 20.08.2019, [http://ogp.am/hy/news/item/2019/08/20/AP\\_4/](http://ogp.am/hy/news/item/2019/08/20/AP_4/); «Առաջարկությունների ներկայացման հրավեր», Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, 19.09.2019, [http://ogp.am/hy/news/item/2019/09/19/4th\\_public/](http://ogp.am/hy/news/item/2019/09/19/4th_public/)

<sup>4</sup> «ԲԿԳ շահագրգիռ անդամների հանդիպում», Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, 01.04.2019, <http://ogp.am/hy/news/item/2019/04/01/NGOs/>, «Կայացել է Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնության աշխատանքային խմբի հանդիպումը», Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, 25.07.2019, [http://ogp.am/hy/news/item/2019/07/25/OGP\\_WG\\_July/](http://ogp.am/hy/news/item/2019/07/25/OGP_WG_July/), «ՀՀ կառավարությունը կարևորում է քաղհասարակության հետ արդյունավետ համագործակցությունը. Էդուարդ Աղաջանյան», Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, 30.10.2019, [http://ogp.am/hy/news/item/2019/10/30/WG\\_meeting/](http://ogp.am/hy/news/item/2019/10/30/WG_meeting/)

<sup>5</sup> ԲԿԳ Հայաստան, Ֆեյսբուք, <https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia>

<sup>6</sup> «Գործողությունների չորրորդ ծրագրի նախագծման փուլի վերաբերյալ ԱՀՄ զեկույցը», Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, 09.09.2019, [http://ogp.am/hy/news/item/2019/09/09/IRM\\_4th/](http://ogp.am/hy/news/item/2019/09/09/IRM_4th/)

<sup>7</sup> «ԱՀՄ ուղեցույց շտեմարանների վերաբերյալ», Բաց կառավարման գործընկերություն, [https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2015/11/IRM\\_Guidance-for-Repositories\\_Updated\\_2020.pdf](https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2015/11/IRM_Guidance-for-Repositories_Updated_2020.pdf)

<sup>8</sup> Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, <http://ogp.am/>

## IV. Մեթոդոլոգիան և տեղեկատվության աղբյուրները

ԱՀՄ զեկույցների հիմքում ընկած հետազոտական աշխատանքներն իրականացվում են համապատասխան երկրների հետազոտողների կողմից: ԱՀՄ բոլոր զեկույցները որակի վերահսկման գործընթաց են անցնում ԱՀՄ թիմի կողմից՝ երաշխավորելու համար, որ պահպանվել են հետազոտական բոլոր ստանդարտները և հետազոտության ընթացքում ցուցաբերվել է պատշաճ մոտեցում:

ԱՀՄ բոլոր զեկույցների որակի վերահսկողությունն իրականացնում է փորձագետների միջազգային խումբը (ՓՄԽ): Այս խումբը բաղկացած է թափանցիկության, մասնակցության, հաշվետվողականության և սոցիալական գիտությունների հետազոտական մեթոդների ոլորտներում փորձառություն ունեցող մասնագետներից:

Ներկայումս փորձագետների միջազգային խումբում ընդգրկված են հետևյալ անձինք.

- Սիգար Կրուգ-Ռուբիո
- Մերի Ֆրանքոլի
- Բրենդն Հալլըրան
- Հիլ Հինսբերգ
- Ջեֆ Լովիթ
- Խուանիտա Օլայա

Վերանայման այս գործընթացը, ինչպես նաև ստացած մեկնաբանությունները ներառելու կարգը մանրամասն նկարագրված են ԱՀՄ ընթացակարգերի ձեռնարկի երրորդ բաժնում՝ և ծրագրի նախագծման վերաբերյալ Հայաստանի զեկույցում (2018-2020):

### ԱՀՄ մասին

**Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ)** նպատակը նախաձեռնությանը միացած երկրների կառավարությունների կողմից կոնկրետ հանձնառությունների ստանձնումն է՝ թափանցիկության խթանման, հանրային մասնակցության ապահովման, կոռուպցիայի դեմ պայքարի և կառավարման որակը բարելավող նոր տեխնոլոգիաների օգտագործման ուղղությամբ: ԲԿԳ անկախ հաշվետվական մեխանիզմը (ԱՀՄ) գնահատում է գործողությունների ազգային ծրագրերի մշակման և իրականացման գործընթացը՝ շահագրգիռ կողմերի միջև երկխոսությունը խթանելու և հաշվետվողականությունը բարելավելու նպատակով:



**Տաթևիկ Մարգարյանն** անկախ հետազոտող է, մասնագիտությամբ՝ սոցիոլոգ, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և հանրային քաղաքականության վերաբերյալ հետազոտությունների փորձառությամբ: Նա աշխատել է մի շարք հասարակական կազմակերպություններում, իսկ ներկայումս խորհրդատվություն, դասընթացներ, հետազոտական ու վերլուծական ծառայություններ է տրամադրում մի շարք տեղական ու միջազգային կազմակերպությունների:

---

<sup>1</sup> ԱՀՄ ընթացակարգերի ձեռնարկ, ԲԿԳ, <https://www.opengovpartnership.org/documents/irm-procedures-manual>

## Հավելված I. ԱՀՄ չափանիշները

ԱՀՄ ուսումնասիրության ընթացքում օգտագործվող չափանիշները և մեթոդները կարելի է գտնել ԱՀՄ ընթացակարգերի ձեռնարկում<sup>1</sup>: Գնահատման հիմնական չափանիշների ամփոփ նկարագիրը ներկայացված է ստորև՝

- **Չափելիություն.**
  - Ստուգման համար բավականաչափ կոնկրետ չէ. հանձնառության տեքստում սահմանված նպատակները և առաջարկվող գործողությունները բավականաչափ հստակ և կոնկրետ չեն, որպեսզի հնարավոր լինի հետագա գնահատման գործընթացի միջոցով օբյեկտիվորեն ստուգել դրանց կատարումը:
  - Ստուգման համար բավականաչափ կոնկրետ է. հանձնառության տեքստում սահմանված նպատակները և առաջարկվող գործողությունները բավականաչափ հստակ և կոնկրետ են, որպեսզի հնարավոր լինի հետագա գնահատման գործընթացի միջոցով օբյեկտիվորեն ստուգել դրանց կատարումը:
- **Համապատասխանություն.** այս չափանիշով գնահատվում է հանձնառության համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին: Հիմք ընդունելով հանձնառության տեքստը, որը շարադրված է գործողությունների ծրագրում, համապատասխանությունը սահմանվում է հետևյալ ուղենիշների օգնությամբ՝
  - Տեղեկատվության մատչելիություն. արդյոք կառավարությունը լրացուցիչ տեղեկություն է բացահայտում կամ բարելավում հանրությանը հասանելի տեղեկությի որակը:
  - Հանրային մասնակցություն. արդյոք կառավարությունը ստեղծում կամ բարելավում է հանրության կողմից որոշումների կայացմանը մասնակցելու կամ ներագդելու հնարավորությունները կամ կարողությունները:
  - Հանրության առջև հաշվետվողականություն. արդյոք կառավարությունը հանրությանը տեսանելի նոր հնարավորություններ է ստեղծում կամ բարելավում առկա հնարավորությունները՝ պաշտոնյաներին իրենց գործողությունների համար պատասխանատվության ենթարկելու համար:
- **Պոտենցիալ ազդեցություն.** այս չափանիշով գնահատվում է հանձնառության *պոտենցիալ ազդեցությունը*<sup>2</sup>՝ ըստ շարադրվածի իրականացման դեպքում: ԱՀՄ հետազոտողն ուսումնասիրում է գործողությունների ծրագրի տեքստը, որպեսզի կարողանա՝
  - հասկանալ, թե որն է այն սոցիալական, տնտեսական, քաղաքական կամ բնապահպանական խնդիրը, որն ընկած է հանձնառության հիմքում,
  - սահմանել ստատուս քվոն գործողությունների ծրագրի մեկնարկի դրությամբ և
  - գնահատել, թե իրագործման դեպքում հանձնառությունն ինչպիսի ազդեցություն կունենա իրավիճակի վրա և ինչ չափով կլուծի վերոնշյալ խնդիրը:
- **Իրականացում.** այս չափանիշով գնահատվում են հանձնառության իրականացումը և կատարված աշխատանքը: Այս չափանիշը գնահատվում է գործողությունների իրականացման փուլի ավարտին, *իրականացման վերաբերյալ ԱՀՄ զեկույցում*:
- **Բերել է դա բաց կառավարմանը.** այս չափանիշով փորձ է արվում ավելի հեռուն գնալ, քան կատարված աշխատանքի և ստացած արդյունքների գնահատումը, և

տեսնել, թե հանձնառության իրականացման արդյունքում ինչպես է փոփոխվել կառավարության գործելակերպը ԲԿԳ արժեքների համապատասխան ոլորտներում: Այս չափանիշը գնահատվում է գործողությունների իրականացման փուլի ավարտին՝ իրականացման վերաբերյալ ԱՀՄ զեկույցում:

### Արդյունքներին ուղղված հանձնառություններ

Հնարավոր աստղանշված հանձնառությունը հավակնտության ու իրականացման ավելի մեծ պոտենցիալ ունի: Լավ հանձնառությունը պետք է հստակ ներկայացնի՝

1. **Խնդիրը.** ո՞րն է սոցիալական, տնտեսական, քաղաքական կամ բնապահպանական խնդիրը, այլ ոչ թե որևէ վարչարարական խնդրի կամ գործիքի նկարագիր (օրինակ՝ «նպաստների համար նախատեսված գումարների ոչ ճիշտ բաշխումը» ավելի կարևոր է, քան «վերկայքի բացակայությունը»):
2. **Ստատուս քվոն.** ո՞րն է քաղաքականության տվյալ խնդրի ստատուս քվոն գործողությունների ծրագրի մեկնարկի դրությամբ (օրինակ՝ «դատական կոռուպցիայի վերաբերյալ բողոքների 26 տոկոսը ներկայումս ընթացք չի ստանում»):
3. **Փոփոխությունը.** անմիջական արդյունքները ներկայացնելու փոխարեն, ո՞րն է հանձնառության իրականացման արդյունքում ակնկալվող գործելակերպի փոփոխությունը (օրինակ, «տեղեկատվության հարցումներին տրված պատասխանների ցուցանիշը կրկնակի կավելանա» նպատակն ավելի ազդեցիկ է, քան «հրապարակել պատասխանների արձանագրությունը»):

### Աստղանշված հանձնառություններ

Ցուցանիշներից մեկը՝ «աստղանշված հանձնառությունը» (⊛), լրացուցիչ բացատրության կարիք ունի, քանի որ այն առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում ընթերցողների համար և խթանում է մրցակցությունը ԲԿԳ մասնակից երկրների միջև: Աստղ ստանալու համար հանձնառությունը պետք է համապատասխանի մի շարք չափանիշների՝

- Հանձնառության տեքստը պետք է լինի **չափելի, համապատասխան** բաց կառավարման արժեքներին և ունենա «**փոխակերպող**» պոտենցիալ ազդեցություն՝ ըստ ծրագրի նախագծման վերաբերյալ զեկույցի:
- Գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ ԱՀՄ զեկույցում հանձնառության կատարման աստիճանը պետք է գնահատվի «զգալի» կամ «ավարտված»:

Այս չափանիշը գնահատվում է գործողությունների ծրագրի իրականացման փուլի ավարտին՝ իրականացման վերաբերյալ ԱՀՄ զեկույցում:

<sup>1</sup> ԱՀՄ ընթացակարգերի ձեռնարկ, ԲԿԳ, <https://www.opengovpartnership.org/documents/irm-procedures-manual>